

**ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ¹**

Գևորգ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Մարիամ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու

Բանալի բառեր. պետական բյուջե, պետական ֆինանսներ, բյուջետային համակարգ, բյուջետային գործընթաց, բյուջետային եկամուտներ և ծախսեր, բյուջետային պլանավորում

Շուկայական տնտեսության պայմաններում երկրի առջև ծառայած հիմնախնդիրների լուծման գործում առանցքային նշանակություն ունի պետական ֆինանսական քաղաքականությունը, որը, սերտ փոխկապվածության մեջ գտնվելով տնտեսական քաղաքականության մյուս ուղղությունների հետ, միաժամանակ ստեղծում է անհրաժեշտ նախադրյալներ դրանց արդյունավետ իրականացման համար: Ընդհանուր առմամբ, պետական ֆինանսական քաղաքականությունը սահմանվում է նաև որպես ֆինանսական ռեսուրսների ձևավորման և օգտագործման իրավասություններով օժտված պետական իշխանության ինստիտուտների և համապատասխան գործիքների համախումբ՝ ուղղված պետության ռազմավարական և մարտավարական նպատակների իրականացմանը:² Մեր կարծիքով, նման սահմանումը որոշակիորեն խընդրահարույց է, քանի որ ստեղծում է որոշակի հարցադրումներ: Մասնավորապես, եթե ֆինանսական քաղաքականությունն իր մեջ ներառում է ֆինանսական ինստիտուտները, ապա այդ դեպքում ի՞նչ է իրենից ներկայացնում ֆինանսական համակարգը: Որոշ մասնագետներ ֆինանսական քաղաքականությունը հատկացնում են երկրորդային դեր՝ դրա մեջ ներառելով բյուջետային, հարկային, դրամավարկային և մաքսային քաղաքականությունները: Ընդ որում, այս դեպքում ֆինանսական քաղաքականությունը վերապահվում է զուտ տնտեսական և սոցիալական քաղաքականության իրականացման օժանդակող միջոցի դեր:³

Ընդհանրացնելով մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները, կարելի է նշել, որ ֆինանսական քաղաքականությունը սահմանվում է կամ որպես ֆինանսական ռեսուրսների կենտրոնացման և օգտա-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 15T-5B103 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Финансы, денежное обращение и кредит: Учебник. 2-е изд. В. Сенчагов, А. Архипов и др.; под ред. В. Сенчагова, А. Архипова. М., 2004. С. 6.

³ Финансы: Учебник для вузов. Под ред. М. Романовского, О. Врублевской. М., 2000. С. 114.

գործման ուղղությամբ իրականացվող կոնկրետ միջոցառումների համախումբ, կամ որպես ինստիտուտների կամ գործիքների համակարգ, կամ էլ որպես միջոց այլ, առավել գլոբալ քաղաքականության իրականացման համար: Այս տեսանկյունից, առկա սահմանումներում շատ հաճախ հնարավոր է միմյանցից տարբերակել «ֆինանսական քաղաքականություն», «ֆինանսական համակարգ» և «ֆինանսների կառավարում» հասկացությունները:

Ընդհանուր առմամբ, քաղաքականությունը, դա նախ և առաջ, համապատասխան ուղորտում ռազմավարական և մարտավարական նպատակների և խնդիրների որոշման, ինչպես նաև դրանց իրականացման հայեցակարգային մոտեցումների և մեխանիզմների մշակման գործընթաց է: Նպատակադրումը յուրաքանչյուր գործունեության առաջին և առավել կարևոր փուլն է ու հանդիսանում է յուրաքանչյուր քաղաքականության հիմնական գործառույթներից մեկը: Տնտեսական և ֆինանսական քաղաքականության դեպքում անհրաժեշտ է հստակ կերպով սահմանել երկրի զարգացման գլոբալ նպատակները կամ որ նույն է՝ պետության առաքելությունը, որը, որպես կանոն, ամրագրվում է երկրի սահմանադրությամբ:

Վերը նշված հարցերի համատեքստում պետական ֆինանսական քաղաքականությունը կարելի է դիտարկել որպես պետական իշխանության մարմինների կողմից իրականացվող գործողությունների և միջոցառումների համախումբ, որոնք ուղղված են ռազմավարական նպատակների և խնդիրների, ինչպես նաև դրանց ձեռք բերման հայեցակարգային մոտեցումների մշակմանը և իրացմանը՝ համապատասխան մարմինների գործառույթների իրականացման նպատակով ֆինանսական ռեսուրսների կենտրոնացված ֆոնդի ձևավորման և օգտագործման միջոցով:

Հարկ է նշել, որ պետական ֆինանսական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը բյուջետային քաղաքականությունն է, որի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է բյուջետային պլանավորման որակով: Վերջինիս վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող տեսակետները որոշակիորեն տարբերվում են միմյանցից: Մասնավորապես, բյուջետային պլանավորման էությունը բացահայտելիս Լ. Դրոբոզինան այն բնութագրում է հետևյալ կերպ. «Բյուջետային պլանավորման տնտեսագիտական էությունը կայանում է երկրի ընդհանուր զարգացման ծրագրի հիման վրա տարբեր մակարդակների բյուջեների կազմման և կատարման գործընթացում ֆինանսական համակարգի տարբեր օղակների միջև համախառն ներքին արդյունքի և ազգային եկամտի կենտրոնացված

բաշխման և վերաբաշխման մեջ»:⁴ Ներկայացված սահմանումից հետևում է, որ պլանավորումը ոչ այլ ինչ է, եթե ոչ ՀՆԱ-ի բաշխման և վերաբաշխման գործընթաց, որը կազմում է բյուջետային հարաբերությունների բովանդակությունը⁵: Բացի այդ, պլանավորման փուլի մեջ բյուջեի կատարման գործընթացի ներառումը, մեր կարծիքով, այնքան էլ տրամաբանական չէ, քանի որ այդ փուլում տեղի է ունենում ընդունված ծրագրերի կատարման ռեսուրսային ապահովում և վերահսկողություն:

Բյուջետային պլանավորման վերաբերյալ մեկ այլ սահմանում տրվում է Տ. Կովալևայի կողմից, ըստ որի «բյուջետային պլանավորումը պետության բյուջետային քաղաքականությունից բխող սկզբունքների և մեթոդների վրա հիմնված բյուջեի կազմման գործընթացում բյուջետային համակարգի և միջբյուջետային հարաբերությունների կառավարում է»:⁶ Այս սահմանման մեջ հեղինակը գրեթե նույն իմաստներով է ներկայացնում պլանավորումը և կառավարումն այն դեպքում, երբ դրանք միմյանցից տարբերվում են ինչպես մասը և ամբողջը: Պլանավորումը հանդիսանում է կառավարման գործընթացի փուլերից մեկը, իսկ վերջինն իր մեջ ներառում է նաև այլ փուլեր: Բացի այդ, նշված սահմանման մեջ հեղինակը որպես օբյեկտ դիտարկում է բյուջետային համակարգը և միջբյուջետային հարաբերությունները, չնայած վերջինները հանդիսանում են բյուջետային համակարգի մասերից, քանի որ հնարավոր չէ կառավարել բյուջետային համակարգն առանց միջբյուջետային հարաբերությունների կարգավորման: Պլանավորումը սահմանափակելով բյուջեի նախագծի կազմմամբ, հեղինակը դուրս է թողնում պլանավորման գործընթացում իրականացվող գործողությունները, քանի որ բյուջեի կազմման հետ միասին իրականացվում է նաև հսկայածավալ աշխատանք միջինժամկետ և երկարաժամկետ պլանավորման, զարգացման ծրագրերի մշակման, բյուջետային հիմնարկների կողմից իրականացվելիք միջոցառումների կազմման ուղղություններով:

Բյուջետային հարաբերությունների ուսումնասիրությանը նվիրված մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ հեղինակները գործնականում ուշադրությունը կենտրոնացնում են ոչ թե «բյուջետային պլանավորում» հասկացության, այլ բյուջեի կազմման գործընթացի վրա այն դեպքում, երբ դրանք տարբեր գործընթացներ են և միմյանցից տարբերվում են իրենց էությամբ, պլանավորման օբյեկտով և արդյունքներով: Բյուջե-

⁴ Общая теория финансов: Л.А. Дробозина, Ю.Н. Константинова, Л.П. Окунева и др.; Под ред. Л.А. Дробозиной - М.: Банки и биржи, ЮНИТИ, 1995. С. 81.

⁵ Manasserian T., Welcoming redistribution of on-budget expenditures, Arka news agency, Yerevan, 2009, available at: <http://arka.am/en/news/economy/13951/>

⁶ Т.М. Ковалева. Бюджетная политика и бюджетное планирование в субъекте Российской Федерации: СПб.: Изд-во СПбГУЭФ, 2001. С.77.

տային պլանավորման էության և բյուջեի կազման գործընթացի տարբերությունների բացահայտման համար ներկայացնենք դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Աղյուսակ 1. Բյուջետային պլանավորման և բյուջեի նախագծի կազմման համեմատական բնութագրերը

Չափանիշ	Բյուջետային պլանավորում	Բյուջեի նախագծի կազմում
Գործընթացի էությունը	Ֆինանսական մեխանիզմի տարր, որն իրենից ներկայացնում է հանրային ֆինանսների կառավարման մաս և ուղղված է բյուջետային քաղաքականության իրականացմանը	Բյուջետային գործընթացի փուլերից մեկը
Պլանավորման օբյեկտը	Սեփական գործառույթների իրականացման համար պետական մարմիններին անհրաժեշտ ռեսուրսներ. բյուջետային միջոցներ և այլ ակտիվներ (գույք և գույքային իրավունքներ)	Բյուջետային համակարգում կենտրոնացվող և պետ. գործառույթների բյուջետային միջոցներ
Գործընթացի մասնակիցներ	Իշխանության և կառավարման մարմիններ	Իշխանության և կառավարման մարմիններ
Պլանավորման ժամանակահատվածը	Ժամանակահատվածը որոշվում է պլանավորման սուբյեկտի կողմից և կախված չէ բյուջետային ժամանակաշրջանից.	Կախված է բյուջետային ժամանակաշրջանից, 1 տարի տարեկան բյուջեների դեպքում
Գործընթացի նպատակը	<ul style="list-style-type: none"> - տնտեսության զարգացման միջինժամկետ և երկարաժամկետ միտումների մասին տեղեկատվության ստացում, - իրականացվող բարեփոխումների, ծրագրերի և օրենքների ֆինանսական հետևանքների համալիր կանխատեսում, - ֆինանսական քաղաքականության ուղրտում հեռանկարային միջոցառումների իրականացման անհրաժեշտության և հնարավորության բացահայտում, - բացասական միտումների հայտնաբերում և կանխարգելիչ քայլերի իրականացում 	Երկրի հիմնական ֆինանսական պլանի կազմում, որը ներկայացվում է օրենսդիր մարմնի հաստատմանը
Արդյունքը	Միջինժամկետ և երկարաժամկետ փաստաթղթերի, հեռանկարային զարգացման և այլ ծրագրերի մշակում	Բյուջեի նախագիծ

Ընդհանրացնելով վերը նշվածը, առաջարկում ենք բյուջետային պլանավորման հետևյալ սահմանումը: Բյուջետային պլանավորումը ֆինանսական մեխանիզմի տարրերից է, որը հանդիսանում է հանրային ֆինանսների կառավարման համակարգի մասերից և իրենից ներկայացնում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսման, բյուջետային քաղաքականության նպատակների հստակեցման և քանակական ներկայացման, դրանց ձեռքբերման օպտիմալ տարբերակի ընտրության, ինչպես նաև պետական մարմինների կողմից բյուջետային քաղաքականության նպատակների ձեռք-

բերման և պետական երաշխիքների ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների ռացիոնալ բաշխման ուղղությամբ գործունեություն:

Գևորգ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Մարիամ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պետական ֆինանսական քաղաքականության և բյուջետային պլանավորման հիմնախնդիրները

Բանալի բառեր. պետական բյուջե, պետական ֆինանսներ, բյուջետային համակարգ, բյուջետային գործընթաց, բյուջետային եկամուտներ և ծախսեր, բյուջետային պլանավորում

Չողվածում բացահայտվել են բյուջետային միջոցների պլանավորման ոլորտում առկա հիմնախնդիրները և ներկայացվել են դրանց լուծումները: Ֆինանսական պլանավորման համատեքստում ուսումնասիրվել են բյուջետային պլանավորման հիմնական մոտեցումները և առաջարկվել են դրանց գործնական կիրառման ուղիները հանրապետության տնտեսական զարգացման ներկա փուլում: Մշակվել են մոտեցումներ բյուջետային գործընթացի կատարելագործման և բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Геворг КИРАКОСЯН, Мариам АВЕТИСЯН

Проблемы государственной финансовой политики и бюджетного планирования

Ключевые слова: государственный бюджет, государственные финансы, бюджетная система, бюджетный процесс, бюджетные доходы и расходы, бюджетное планирование

В статье выявлены проблемы в сфере планирования бюджетных средств и представлены их решения. В контексте финансового планирования изучены основные подходы бюджетного планирования и представлены пути их практического использования на настоящем этапе экономического развития республики. Разработаны подходы усовершенствования бюджетного процесса и повышения использования бюджетных средств.

Gevorg KIRAKOSYAN, Mariam AVETISYAN

Problems of state finance policy and budget planning

Key words: state budget, public finance, budget system, budget process, budget revenues and expenditures, budget planning

The problems on planning of the budgetary funds are identified and presented their solutions in the article. The basic approaches of the budget planning in the context of financial planning are explored and presented the ways of their practical use at the present stage of economic development of the Republic. The approaches on improving of the budgetary process and increasing the use of the state funds are developed.